Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 770 - Ա որոշման

«ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՍՏԵՂԾՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության ռազմավարական գիտական ուղղությունների զարգացմանը, տեխնոլոգիական ոլորտում կիրառական լուծումների տրամադրմանը, կրթության, մասնագիտական ուսուցման զարգացմանը և գիտական նորարարությունների ստեղծմանը, ինչպես նաև ռազմավարական տեխնոլոգիաների մշակման, հետազոտման և զարգացմանը նպաստելու նպատակով գիտահետազոտական կենտրոնի ու լաբորատորիայի ստեղծում: Կենտրոնը և լաբորատորիան հագեցված են լինելու բազմաթիվ գիտական ու կիրառական նշանակություն ունեցող սարքավորումներով, որտեղ իրականացվելու են գիտահետազոտական աշխատանքներ և ծրագրեր, ինչպես նաև մշակվելու են տարբեր գիտահետազոտական փորձանմուշներ: Նախանշված գիտահետազոտական նպատակներին ծառայելուց հետո կենտրոնը և լաբորատորիան անհատույց կփոխանցվեն Հայաստանի Հանրապետությանը:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օգտվել հարկերի, տուրքեր և այլ պարտադիր վճարների արտոնություններից:
3.	Բարեգործը	«Գիտական նորարարության և կրթության կենտրոն» հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Դավթաշեն, 3-րդ թաղամաս, շենք 6, բն. 22, ՀՎՀՀ՝ 00234033)
4.	Ծրագիրը կատարողը	«Գիտական նորարարության և կրթության կենտրոն» հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Դավթաշեն, 3-րդ թաղամաս, շենք 6, բն. 22, ՀՎՀՀ՝ 00234033)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ, քաղ. Երևան, Ալիխանյան եղբայրներ փողոց 2՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված տարածքում՝ գիտության բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	6 մլրդ 940 մլն դրամ

7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետությունը ի դեմս ՀՀ Կառավարության՝ համաձայն «Բարեգործության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2021 թվականի սեպտեմբերի 20-ից 2046 թվականի դեկտեմբերի 30-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Գիտահետազոտական լաբորատորիայի և կենտրոնի արտադրական ու վարչական մասնաշենքի վերակառուցում, վերանորոգում և հարակից տարածքի բարեկարգում՝ շուրջ 1 մլրդ 20 մլն դրամ, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի սեպտեմբերի 20-ից մինչև 2025 թվականի օգոստոսի 31-ը: 2. Գիտահետազոտական լաբորատորիայի և կենտրոնի գործունեության համար սարքավորումների ձեռք բերում և ներկրում՝ շուրջ 3,5 մլրդ դրամ, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի սեպտեմբերի 20-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը: 3. Գիտահետազոտական աշխատանքների և ծառայությունների պատվիրում, ինչպես նաև գիտահետազոտական փորձանմուշների մշակում՝ շուրջ 1,6 մլրդ դրամ, նախատեսվում է իրականացնել 2023 թվականի հուլիսի 1-ից մինչև 2046 թվականի դեկտեմբերի 30-ը: 4. Կազմակերպական ծախսեր՝ կոմունալ վճարներ և գրասենյակային ծախսեր՝ շուրջ 820 մլն դրամ, նախատեսվում է իրականացնել 2021 թվականի սեպտեմբերի 10-ից մինչև 2025 թվականի օգոստոսի 31-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Շինարարական աշխատանքների իրականացում՝ շուրջ 612 մլն դրամ. 2. Շինանյութերի, գործիքների և պարագաների ձեռքբերում՝ շուրջ 408 մլն դրամ. 3. Անհրաժեշտ կահավորանքի ու սարքավորումների ձեռքբերում և ներմուծում՝ շուրջ 3,5 մլրդ դրամ. 4. Գիտահետազոտական աշխատանքների և ծառայությունների պատվիրում, ինչպես նաև գիտահետազոտական փորձանմուշների մշակում՝ շուրջ 1,6 մլրդ դրամ. 5. Կոմունալ վճարներ և գրասենյակային ծախսեր՝ շուրջ 820 մլն դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	1. կոմունալ ծախսեր՝ 750 մլն դրամ (ամսական 2,5 մլն դրամ), 2. գրասենյակային ծախսեր՝ 70 մլն դրամ (տարեկան 2,8 մլն դրամ),

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության բարձրագույն տեխնոլոգիական արդյունաբերության ու Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության մշակույթի և սպորտի նախարարությունների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀՀ կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում լիազորված մարմնին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Ս. ՊԱՊԻԿՅԱՆ

23.09.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ